

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ռասսի ՍՊԸ-ն ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-47/24 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	<p>Համազգեստը բաղկացած է բաճկոնից և տաբատից Համազգեստը սև գույնի, բաղկացած է բաճկոնից և տաբատից: Կտորի գործվածքը «Ռիպստոպ» տեսակի, մակերեսային խտությունը՝ 195±5 գ/մ², կտորը պոլիէսթերաբամբակային: Բաճկոնը միալանջ, թիկունքամասը ծավալուն՝ կտրվածքներով, գաղտնի կենտրոնական կոճկվածքով է, կոճկվում է պաշտպանիչ կափույրի տակ թաքնված պլաստմասսե տրակտոր տիպի շղթայով: Բաճկոնն ունի 5-6 սմ լայնությամբ ծալովի ուղղանկյունաձև կանգունա-կով օձիք: Օձիքը կանգնած վիճակում դրսից կոճկվում է 2.5 սմ լայնությամբ կաչուն ժապավենով: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում մշակված են կափույրներով վրադիր երկու գրպաններ, որոնք տեղա-կայված են կրծքամասում, դեպի ներս թեքությամբ՝ կենտ-րոնական ուղղահայաց կարից հեռավորության վրա: Գըր-պանի լայնությունը 14-15 սմ, երկարությունը 13-14 սմ: Առաջամասի գրպանները կոճկվում են 2.0-2.5սմ կաչուն ժապավենով: Թևքերի վրա մշակված են կափույրով ծա-վալուն վրադիր գրպաններ, որոնք կոճկվում են կաչուն ժապավենով: Թևքերի ծավալուն գրպանների կափույր-ների վրա մշակված են 4.5-5.0x9.5-10.0 սմ չափսերի, իսկ ձախակողմյան գրպանի վրա 13-13.5x9.5-10.0 սմ չափսերի կաչուն ժապավեններ: Ձախ թևքի գրպանի վերնամա-սում 4.5-5.0x9.5-10.0սմ չափսի կաչուն կտորի վրա ամ-րացվում է ՀԱԷԿ բառը, որը եզրակարված է բաց մոխ-րագույն մետաքսե թելով: Տառերը նույնպես ասեղնա-գործվում են բաց մոխրագույն մետաքսե թելով, յուրա-քանչյուր տառի բարձրությունը 2-2.5 սմ, լայնությունը 1.5-1.8սմ, բառի ընդհանուր երկարությունը 8.5-9սմ: Տառա-չափը կիրառելի համաչափության կանոնով: Գրպանի ներքևի հատվածի ամբողջ մակերեսով ամրացվում է 13-13.5x9.5-10.0 սմ կաչուն կտոր, որի վրա 7սմ</p>

տրամագծով ամրացվում է ՀԱԵԿ-ի լոգոն (գունավոր, նկար կցվում է՝ № 1): Գրպանների թեքությունը դեպի ներս, ուսակարերի նկատմամբ՝ 120 աստիճան: Վրադիր գրպանների կափույրները զարդակարված են 0,5սմ լայնությամբ կարով: Կրծքամասի ձախ կողմում մշակված է 2,5-3սմ x12,0-12,5սմ չափսերով կաչուն ժապավեն, որի ամբողջ երկայնքով կաչուն կտորի վրա ասեղնագործվում է ՌԵԺԻՄԻ ԲԱԺԻՆ բառը՝ եզրակարված բաց մոխրագույն մետաքսե թելով: Տառերը նույնպես ասեղնագործվում են բաց մոխրագույն մետաքսե թելով, յուրաքանչյուր տառի բարձրությունը 1.5-1.8 սմ, լայնությունը 0.8 սմ, բառի ընդհանուր երկարությունը 8.5-9սմ: Տառաչափը կիրառելի համաչափության կանոնով:Թևքերը ներկարված են ամբողջովին փակ գույգ կարերով: Արմունկի մասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև արմնկակալ-ներ: Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ գույգ կարերով: Թևքերի ներքևի մասում մշակված են անկյունաձև պատաներ, որոնք բազկակալում կոճկվում են 2,5սմ լայնությամբ կաչուն ժապավենով: Բաճկոնի օձիքի ներքևի հատվածում մշակվում է լրացուցիչ դետալ, որի տակ տեղադրվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Տաբատը ուղիղ կարվածքով, մշակված գոտիով, որը կոճկվում է մեկ օղակ կոճակով, գուլֆիկը կոճկվում է նեյլոնե շղթայով: Առաջամասում կողքից, թեք ներկար-ված գրպաններ, 14-15 սմ բացվացքով: Գոտին մշակված է 6-7 գոտեմակօղակով: Տաբատի հետևա-մա-սում մշակ-ված են կափույրով կտրված գրպաններ՝ երկու կոճակով կոճկ-վող: Կողքերից մշակված են ուղղանկյուն կափույրով ծա-վալուն երկծալ վրադիր գրպաններ: Կափույրները կոճկ-վում են 2.5 x 4,5-5 սմ չափսերի երկու կաչուն ժապա-վեններով: Գրպանի լայնությունը 17-18 սմ, իսկ երկար-ությունը՝ 19-20 սմ, կափույրի լայնությունը 5,5-6սմ: Տաբա-տի առաջամասում մշակված են, քառանկյուն ծնկա-կալ-ներ, եզրերը կարված գույգ կարերով: Բաճկոնի և տա-բա-տի միացման բոլոր կարերը կարվում են շղթա-յա-կան փակ գույգ կարերով: Համազգեստի կոճակները՝ 17-20սմ տրամագծով, չորս կարանցքերով, գույնը՝ սև: Յուրաքանչյուր աշխատակցի համար պահանջվում է անհատական կար:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Расса в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЗЦЕЧ-ЕЦДЦПЗР-47/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	